


ՅՈՒՆԻՍԿՈՒՆ, ՏԷՐ

Այս խօսքերն ասաց Պետրոս առաքելալը Հռովմից հեռանալու ժամանակ, երբ տեսաւ մեր Տէրը՝ խաչն ուսած դէպի Հռոմ գնալիս: Յիսուս ուզում էր երկրորդ անգամ խաչուել: Ինձ միշտ թւում է այժմ էլ Յիսուս խաչն ուսին փայլում է երկնականարով, պատրաստ նորից խաչուելու մարդկութեան համար, որովհետեւ այդպէս էլ մարդկութիւնը չհասկացաւ թէ, որն էր Տիրոջ մարդանալու, չարչարուելու, խաչուելու եւ վերստին յարութիւն առնելու «Խորհուրդ խորին»ը:

Յո՞ւ երթաս, մարդկութիւն: Ու՞ր ես գնում, մա՛րդ: Փորձեմք տեսնել, թէ սիրոյ այն սերմերը, որ Յիսուս ցանեց մեր մէջ, արդեօ՞ք ծլարձակել են: Այն ուղին որ մատնանշեց մեզ Յիսուս, արդեօք դրանով է փայլում մարդկութիւնը, թէ 360 աստիճան դառնալով նորից եկել ենք նոյն ելման դիրքին եւ այժմ, ինչպէս 2000 տարի առաջ, անհրաժեշտութիւն ունենք մէկին, որ նորէն «քառնայ գմեղս աշխարհի»: Ցաւօք, այդպէս է որ կայ: Մենք չհասկացանք, որ Յիսուս մեզ ազատեց օրէնքի գերութիւնից եւ տուեց սիրոյ օրհնութիւնը: Իսկ մենք այդ նոյն սէրը առանք ու կանոնակարգեցինք, դարձրինք օրէնք, ու ամէն մէկս էլ դառանք սիրոյ օրէնսգէտներ: Դա թերեւս ամենամեծ անջրպետն էր, որ առաջացրինք մեր եւ Յիսուսի միջեւ:

Երկրորդ: Յիսուս, հակառակ Հին Կտակարանեան աստուած-պաշտութեան, բեկանեց ծէսը եւ աւանդութիւնը, փարցած դոգմաները եւ մեզ բերեց իր կեանքի օրինակը եւ կրօնը դարձրեց ապրած, ապրող, կենդանի կեանք: Այս էր Յիսուսի յեղափոխութիւնը: Մենք յիմարաբար առանք Յիսուսի կեանքը եւ այդ կեանքը վերածեցինք դոգմայի, ծէսի եւ աւանդութեան, անշնչացրինք այն մե՛ր իսկ ձեռքով: Նորից 360 աստիճանի տեղապտոյտ, նորից Աստուծոյ անունը բարբառող բերաններ, բայց փար սրտեր:

Ու՞մ համար եկաւ Յիսուս, ու՞մ պաշտպան կանգնեց, ու չդատեց երբեք: Նա պաշտպան կանգնեց ու մեծ սիրով սիրեց մոլորեալ ու արհամարհուած, շեղուած ու խարխափող հոգիներին: Յիշենք դրանցից մի ֆանիսին. անառակ որդուն, խաչուած աւագակին, շնացող կնոջը, բարոյագուրկ Մարիամ Մագդաղենացուն, արհամարհուած սամարացիներին, խուլին, համրին, կոյրին դիւահարին, բորտին ու անդամալոյծին: Ահա թէ որոնցով Յիսուս շրջապատեց իրեն: Իսկ մենք ճիշտ հակառակը: Անառակ որդի ենք փնտռում՝ որպէսզի փակենք մեր տան դռները նրա առջեւ, աւագակ ենք փնտռում՝ որպէսզի դատապարտենք, շնացող ու բարոյագուրկ մէկին՝ որպէս զի խարազանենք, խուլ, համր ու հիւանդ՝ որպէսզի ծաղրենք ու ֆիժիծաղ տանք: Մենք պատուում ու երկրպագում ենք ազգային ջոջերին, հարուստ ու կարողութիւն ունեցող մարդկանց, եւ մարմարեայ տաճարների ադամանդեայ զարդն ու խաչը: Առանց անդրադառնալու, որ ադամանդեայ խաչը ոչնչով առաւել չէ ա՛յն փայտեայ խաչից, որի վրայ սիրտ է բարախում: Ծէսն իմաստաւորում է այն ժամանակ միայն, երբ առ Աստուած է բարձրանում



աղօթքը, եւ թիում է սիրող ու հաւատացող սրտից, այլ ոչ թէ անհասկանալի բառերի կոյտի տեսով պտտում մե՛ր իսկ գլխավերելում:

Յո՞ Երթաս մարդկութի՛ն: Յիսուսի խաչելութեան ու մահուան ժամանակ պատռուեց խորանի վարագոյրը՝ ի նշան մարդ-Աստուած նո՛ր յարաբերութեան: Յիսուս վերացրեց Հին Կտակարանեան Աստուած-մարդ չոր ու պաշտօնական, վերադաս-ստորադաս յարաբերութիւնը եւ համակ սէր դարձած մտաւ մեր սրտերը: Իսկ մենք այդ վարագոյրի տեղ պատ շարեցինք ու չընդունեցինք նրան մեր սրտերից ներս:

Լոյսը իջաւ աշխարհ: Եւ փոխանակ լինելու այդ Լոյսի մէջ, սնունդու Լոյսի այդ աղբիւրից, մենք ընտրեցինք խաւարը, լաւագոյն դէպքում ինքններս մեզ մի մի լուսակիր կարծելով՝ խորհեցինք, թէ մեր ներսում եղած լոյսը բաւարար է, որպէսզի մենք ինքններս մեր կեանքի նամբան լուսաւորենք: Եւ յայտնուեցինք դժոխքում, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոյսի կատարեալ բացառում: Մեր երկրի եւ դժոխքի միակ տարբերութիւնը այն է, որ այստեղ դեռ ամէն ինչ կորած չէ, դեռ կարող է անդրադարձ, ետդարձ լինել: Իսկ դժոխքում դա անհնար է լինելու:

Յո՞ Երթաս մարդկութի՛ն: Մենք ամէնքս էլ հիւանդ ենք: Եւ Յիսուս եկաւ հիւանդների համար: Բայց չենք ուզում ընդունել մեր հիւանդութիւնը: Արդէն դա՛ էր տարբերութիւնը Սիմոն փարիսեցու եւ Յիսուսի ոտքերը արցունքներով լուացող Մեղաւոր Կնոջ միջեւ: Այդ կինը գիտէր, որ ինքը հիւանդ է, շատ հիւանդ, եւ այսօր պէտք ունի Յիսուս-բժշկին: Որ ինքը միայնակ չի կարող բուժուել: Նա գիտէր ո՛րքան խաւարով է լցուած իր կեանքը եւ որքան լոյսի պէտք ունի: Ու ձգտում էր դէպի այդ Լոյսը: Իսկ փարիսեցին ինքնագոհ է, բարձր է իր եւ մարդկանց աչքին, նա առողջ է, նա բժշկի պէտք չունի: Եւ դա՛ է արդէն իր դատաստանը: Այստեղ ուզում եմ յիշել մի իմաստունի հետեւեալ խօսքերը. «Սիրի՛ր նշմարտութիւնը, բայց ներողամիտ եղիր մոլորութիւնների հանդէպ»:

Ես այն համոզմանն եմ, որ ոչինչ չի փոխուել, եւ Յիսուս իր Երկրորդ Գալստեան ժամանակ նոյն հարցումներն է անելու մեզ՝ ինչ որ առաջին անգամ: Յիշենք Յիսուսի մի քանի մեղադրական խօսքերը ուղղուած մարդկութեան որոշ խաւերի՝ առանց մեկնաբանութիւնների, որոնց կարիքը թերեւս չկայ եւ գուցէ վտանգաւոր էլ է...

«Ծանր ու դժուարակիր բեռներ են կապում ու դնում մարդկանց ուսերի վրայ, բայց իրենց մատով անգամ չեն ուզում շարժել դրանք:

«Կո՛յր առաջնորդներ, որ մժղուկները քամում էք եւ ուղտերը կուլ էք տալիս:

«Զեր աւանդութիւնները կը դառնան ձեր դատաստանի պատնաղը:

«Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ կոտորում էիր մարգարէներին ու քարկոծում քեզ մօտ ուղարկուածներին: Քանի անգամ կամեցայ հաւաքել քո մանուկներին. ինչպէս հաւն է հաւաքում իր ձագերին թեւերի տակ, բայց չկամեցաք:

«Աստուած մեռելների Աստուած չէ, այլ՝ ողջերի, ուստի դուք խիստ մոլորուած էք:

«Նրանք ուտում են այրիների տները, ցուցադրաբար երկարացնում են աղօթքները, որպես զի անլի խիստ դատաստան ընդունեն:

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չափով այրին անլի շատ գցեց, քան գանձանակի մէջ միւս բոլոր դրամ գցողները, քանի որ ամէնքը իրենց անլորդից գցեցին, իսկ նա, իր չափաւորութիւնից, գցեց ամէն ինչ որ ունէր՝ իր ամբողջ ապրուստը:

«Կեղծաւոր, նախ քան աչքի գերանը հանիր ...:

«Ինչո՞ւ ինձ Տէր, Տէր էք կոչում, իսկ ինչ ասում եմ՝ չէք անում:

«Երբ նաշ կամ ընթրիք ես տալիս, կանչիր աղփատներին, խեղանդամներին, կաղերին ու կոյրերին եւ երանելի կը լինես:» (Իսկ ովքե՞ր են մեր ընթրիքների մասնակիցները, եւ արդեօ՞ք երանելի ենք մենք:)

Պատասխանները առանել քան պարզ են:

Այժմ նայեմք մեր երկիր մոլորակին «գլորուսի» վրայ: Հսկայական մայրցամաքներն ու ովկիանոսները մի ափի չափ տեղ են գրաւում միայն, ուրեմն այդ ամէնի մէջ որչա՞փ տեղ է գրաւում մարդը իր մէկ մեքը եօթանասուն սանթիմեքը հասակով. մի փոքրիկ կէտից էլ փոքր: Այսինքն՝ ՈՉՆՁՈՒԹԻՒՆ:

Մի պահ մեր վաթսուն-եօթանասուն տարուայ կեանքը տեղադրենք ժամանակի ու պատմութեան անսահմանութեան մէջ: Որքա՞ն է տեսնում մեր կեանքը: Ակնթա՞րթ, անլի՞ պակաս: ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ: Ոչնչութիւն եւ ունայնութիւն:

Ահա մէկ մեքը եօթանասուն սանթիմեքը հասակով մարդը՝ իր վաթսուն տարուայ կեանքով: Եւ միայն Աստուած է, որ այդ ՈՉՆՁՈՒԹԻՒՆԸ բերում եւ դարձնում է ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ կարեւորագոյն էակ: Միայն Աստուած է, որ մեր կարճատեւ կեանքը երկարաճում եւ յաւերժութեան է հասցնում: Միայն Յիսուսով է լցւում մեր կեանքի ունայնութիւնը:

Փորձեմք գտնել ետդարձի նախապարհներ: Փորձեմք գտնել եւ հասկանալ մեր Տիրոջը. ի՞նչ էր ուզում նա իրականում: Իսկ նրա ուզածը մեր սրտերն ու հոգիներն են՝ լցւած աստուածային լոյսով, ջերմ սիրով, անսահման ներողամտութեամբ եւ անկեղծութեամբ: Դաժան ժամանակների սերունդ ենք: Եւ այժմ մարդ ոչնչով չի կարող միւսին զարմացնել, միայն մի բանով – իր բարութեամբ: Խելայեղ 21րդ դարն է մեզ բաժին ընկել, բայց յիշեմք մեծ սուրբի՝ Ֆրանչիսկոսի խօսքերը եւ դրանով էլ աւարտեմք. «Ահաւոր եւ բարձրագոյն սարսափների ժամանակաշրջանը, դա նաեւ ժամանակաշրջանն է մեծագոյն յոյսերի ու սպասումների»:

ԸՆԾԱՆՈՒՆԷՐ ԱՐԼ. ԲԱՐԱԽԱՆԵԱՆ